ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1211-Ա

13 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՈՂՍ ԳՅՈՒՂԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Դողս գյուղի Ե.Չարենցի փողոցի թիվ 16 տան բնակիչ Լաերտ Վարազդատի Հարությունյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն, Եվա Խաչիկի Հարությունյանին և Վահան Վարազդատի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 05.04.2022թ. տրված թիվ 05042022-04-0035 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 26.01.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20265LWND7/ Վաղարշապատ համայնքի Դողս գյուղի Ե.Չարենցի փողոցի թիվ 16 հասցեում գտնվող 0.118հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 184.3քմ /արտաքին 184.3քմ, ներքին 146.1քմ/ մակերեսով բնակելի տունը և անասնաշենքը օրինականացնելու խնդրանքով: Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Վաղարշապատ համայնքի Դողս գյուղի Ե.Չարենցի փողոցի թիվ 16 հասցեում գտնվող 0.118հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 184.3քմ /արտաքին 184.3քմ, ներքին 146.1քմ/ մակերեսով բնակելի տունը և անասնաշենքը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 145 966 /

հարյուր քառասունհինգ հազար ինը հարյուր վաթսունվեց / ՀՀ դրամ, որը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

2. ընդհանուր 8քմ ներքին մակերեսով ծածկը և թռչնանոցը համարել ինքնակամ:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
13 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1212-Ա

13 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 83/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 3 տան բնակիչ Տիգրան Էդիկի Հովհաննիսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 23.12.2025թ. տրված թիվ 23122025-04-0123 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ.Եսայան փողոցի թիվ 47/1 հասցեում գտնվող բնակելի տանը կից համայնքային սեփականություն հանդիսացող 0.00181հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքով իրեն օտարելու խնդրանքով: Նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հնարավոր չէ այն օտարել որպես առանձին գույքային միավոր: Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետի , «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 24.04.2026թ. թիվ 137-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ.Եսայան փողոցի թիվ 47/1 հասցեում գտնվող բնակելի տանը կից համայնքային սեփականություն հանդիսացող Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դ.Անհաղթի փողոցի թիվ 83/1 հասցեում գտնվող 0.0181հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Տիգրան Էդիկի Հովհաննիսյանին:

2. Տիգրան Էդիկի Հովհաննիսյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

3.Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 522 638 /հինգ հարյուր քսաներկու հազար վեց հարյուր երեսունութ/ ՀՀ դրամ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
13 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1213Ա

13 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հաշվի առնելով կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանի զեկուցագիրը, երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվող համաքաղաքային միջոցառումների համար անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 17840/տասնյոթ հազար ութ հարյուր քառասուն/ դրամ փոխանցել ԱՁ Արթուր Մկրտչյանի Ամերիաբանկ ՓԲԸ-ի 1570077662960100 հաշվեհամարին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1214-Ա

13 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 211/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Աբովյան փողոցի թիվ 11 տան բնակիչ Սերոբ Միերի Ղազարյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն և Հռիփսիմե Ֆյոդրի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 07.08.2025թ. տրված թիվ 07082025-04-0088 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 211 հասցեում գտնվող բնակելի տանը կից համայնքային սեփականություն հանդիսացող 0.0355հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքով իրեն օտարելու խնդրանքով: Նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հնարավոր չէ այն օտարել որպես առանձին գույքային միավոր: Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետի , «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 24.04.2026թ. թիվ 139-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 211 հասցեում գտնվող բնակելի տանը կից համայնքային սեփականություն հանդիսացող Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասի թիվ 211/1 հասցեում գտնվող 0.0355հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Սերոբ Միերի Ղազարյանին և Հռիփսիմե Ֆյոդրի Ղազարյանին:

2.Սերոբ Միերի Ղազարյանի և Հռիփսիմե Ֆյոդրի Ղազարյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

3.Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 1 025 063 /մեկ միլիոն քսանհինգ հազար վաթսուներեք/ ՀՀ դրամ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
13 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1215-Ա

13 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՍԱԼԵՌԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Մուսալեռան փողոցի թիվ 3 տան բնակիչ Հովհաննես Արտուշի Կարապետյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն և Արաքսյա Ղևոնդի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 19.04.2024թ. տրված թիվ 19042024-04-0036 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական/ Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Մուսալեռան փողոցի 04-081-0074-0024 կադաստրային ծածկագրով բնակելի տանը կից համայնքային սեփականություն հանդիսացող 0.0019հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքով իրեն օտարելու խնդրանքով: Նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հնարավոր չէ այն օտարել որպես առանձին գույքային միավոր: Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետի , «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 24.04.2026թ. թիվ 138-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Մուսալեռան փողոցի 04-081-0074-0024 կադաստրային ծածկագրով բնակելի տանը կից համայնքային սեփականություն հանդիսացող Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Մուսալեռան փողոցի թիվ 1/1 հասցեում գտնվող 0.0019հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Հովհաննես Արտուշի Կարապետյանին և Արաքսյա Ղևոնդի Կարապետյանին:

2. Հովհաննես Արտուշի Կարապետյանի և Արաքսյա Ղևոնդի Կարապետյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

3.Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 23 199 /քսաներեք հազար հարյուր իննսունինը/ ՀՀ դրամ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
13 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1216-Ա

13 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 810/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Արագած գյուղի 1-ին փողոցի թիվ 38 տան բնակիչ Վիրաբ Սարգսի Գևորգյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 06.07.2020թ. տրված թիվ 06072020-04-0009 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի թաղամասի թիվ 810 հասցեում գտնվող հողամասին կից համայնքային սեփականություն հանդիսացող 0.0224հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքով իրեն օտարելու խնդրանքով: Նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հնարավոր չէ այն օտարել որպես առանձին գույքային միավոր: Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետի , «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 24.06.2026թ. թիվ 141-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի թաղամասի թիվ 810 հասցեում գտնվող հողամասին կից համայնքային սեփականություն հանդիսացող /հիմք՝13.05.2026թ. տրված թիվ 13052026-04-0022 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 810/1 հասցեում գտնվող 0.0224հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Վիրաբ Սարգսի Գևորգյանին:

2. Վիրաբ Սարգսի Գևորգյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

3.Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 646 800 /վեց հարյուր քառասունվեց հազար ութ հարյուր / ՀՀ դրամ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**



Ստորագրված է
13 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1217-Ա

13 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 04-002-0396-0039 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Աղայան փողոցի թիվ 15 տան բնակիչ Տիգրան Վարդանի Առաքելյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն և Վահրամ Վարդանի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 18.08.2025թ. տրված թիվ 18082025-04-0049 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-0396-0049 կադաստրային ծածկագրով հողամասին կից համայնքային սեփականություն հանդիսացող 04-002-0396-0039 կադաստրային ծածկագրով 0.0349հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, կորիզավոր հողատեսքի /4-րդ կարգի պտղատու այգի/ հողամասը ուղղակի վաճառքով իրեն և Վահրամ Վարդանի Առաքելյանին օտարելու խնդրանքով: Նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հնարավոր չէ այն օտարել որպես առանձին գույքային միավոր: Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետի , «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 24.06.2026թ. թիվ 140-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-0396-0049 կադաստրային ծածկագրով հողամասին կից համայնքային սեփականություն հանդիսացող 04-002-0396-0039 կադաստրային ծածկագրով 0.0349հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, կորիզավոր հողատեսքի /4-րդ կարգի պտղատու այգի/ հողամասը, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Տիգրան Վարդանի Առաքելյանին և Վահրամ Վարդանի Առաքելյանին:

2. Տիգրան Վարդանի Առաքելյանի և Վահրամ Վարդանի Առաքելյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

3.Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 101 908 / հարյուր մեկ հազար ինը հարյուր ութ / ՀՀ դրամ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
13 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1218-Ա

13 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՌՈՒԶԱՆ ԵՍԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 61Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 1 ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսակովի փողոցի թիվ 47 տան բնակիչ Զինաիդա Վասիլի Բադանյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 28.02.2013թ. տրված թիվ 28022013-04-0419 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Արսեն Մելքոնյան Արթուրի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0489/ կողմից 17.07.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026XCYEQV/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ.Եսայան փողոցի թիվ 61բ հասցեում գտնվող 0.074հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 45.8քմ /արտաքին 45.8քմ, ներքին 36.3քմ/ մակերեսով բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ինքնակամ բացված թվով 1 պատուհանը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր

սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ.Եսայան փողոցի թիվ 61բ հասցեում գտնվող 0.074հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 45.8քմ /արտաքին 45.8քմ, ներքին 36.3քմ/ մակերեսով բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ինքնակամ բացված թվով 1 պատուհանը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 78 297/ յոթանասունութ հազար երկու հարյուր իննսունյոթ / ՀՀ դրամ, որը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
13 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1219-Ա

13 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի 1-ին փակուղի թիվ 7 տան բնակիչ Հենրիկ Արմենի Պառավյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 03.03.2025թ. տրված թիվ 03032025-04-0024 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ալավերդյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող 0.0298հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշմամբ հաստատված հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1 . Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ալավերդյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող 0.0298հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
13 Օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1220-Ա

13 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ռ.ԵԱՍԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 61Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսակովի փողոցի թիվ 47 տան բնակիչ Զինաիդա Վասիլի Բադանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ. Եսայան փողոցի թիվ 61բ հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 28022013-04-0419 տրված՝ 28.02.2013թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011KHE5YKW/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Արարատյան փողոց, թիվ 79 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * ՎԱՂԱՐՇԱՊԱՏ * 04463138 * ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ստորագրված է
13 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1221Ա

13 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հաշվի առնելով կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանի զեկուցագիրը, երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվող համաքաղաքային միջոցառումների ժամանակ երիտասարդներին գրքեր նվիրելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 86400/ ութսունվեց հազար չորս հարյուր / դրամ փոխանցել ԱՁ Ժիրայր Միքայելյանի Արդշին բանկ ԲԲԸ-ի 2475933250013325 հաշվեհամարին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1222-Ա

13 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.05.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 650Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 02.06.2026թ. թիվ Կ-02062026-04-0192 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի ղեկավարի 06.05.2026 թվականի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տունը Հակոպ Վլադիմերի Պլանջյանի սեփականությունը համարելու և ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինությունները օրինականացնելու մասին» թիվ 650Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1)որոշման նախաբանում նշված «21.01.2026թ. կազմված հատակագիծ» բառերը փոփոխել «19.05.2026թ. կազմված հատակագիծ» բառերով:

2)որոշման նախաբանում և եզրափակիչ մասում նշված « 0.0645հա» բառերը փոփոխել « 0.0643» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
13 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1223-Ա

13 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4/1, 4/2 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով «ԷԿՈ ՔՈՆՍՏՐԱԿՇԵՆ» ՍՊԸ-Ի տնօրեն Վահե Ռուբենի Կևորկովի դիմումը «ԷԿՈ ՔՈՆՍՏՐԱԿՇԵՆ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 10032025-04-0038 տրված՝ 10.03.2025թ., «ՎԻՋԻ-Ս» ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 0439/ կողմից 21.07.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011PSCSJ9C, 040119JBJTMS/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ս. Շահումյան փողոցի թիվ 4/1, 4/2 10 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ստեփան Շահումյան փողոց 4/1, 4/2 շենքի , թիվ 10 ավտոկայանատեղի,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ստեփան Շահումյան փողոց 4/1, 4/2 շենքի, թիվ 10/1 ավտոկայանատեղի:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԼԻԱԿՅԱՆ

Ստորագրված է
13 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1224-Ա

13 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԱՐՏԻՆ ԳՈՒՐԳԵՆԻ ԿԱՐՍԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ղ.Աղայան փողոցի թիվ 8ա տան բնակիչ Մարտին Գուրգենի Կարսելյանի դիմումը՝ պարզվել է, որ.

- համաձայն Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 12.05.2006թ. հաստատված 2602 սեղանամատյանով գրանցված, «Արմավիրի մարզի» նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 30.05.2025թ. հաստատված 2660 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր, «Երևան» նոտարական տարածքի նոտար Տաթևիկ Լյովայի Տաշչյանի կողմից 29.04.2026թ. հաստատված 4500 գրանցամատյանով գրանցված իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելիությունը հաստատելու մասին որոշումը և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 23.12.2025թ. կազմված հատակագծի՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ղ.Աղայան փողոցի թիվ 8ա հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Մարտին Գուրգենի Կարսելյանին.

- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.0565 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և օժանդակ շինություն,

-բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0055հա սահմանազատված հողամաս,

- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով

սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ղ.Աղայան փողոցի թիվ 8ա հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունը և ավել օգտագործվող 0.0055հա մակերեսով հողամասը համարել Մարտին Գուրգենի Կարսեյանի /ծնված՝ 14.04.1950թ./ սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
13 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1225Ա

13 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

«ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի 15-Ն որոշումները և «ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 10-ի N 12450).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջը 2026 թվականի (ընթացիկ տարվա) համար տալ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Արմավիր մայրուղի 48/1 հասցեում հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 193 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ հեղուկացված նավթային գազերի վաճառքիթույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1226Ա

13 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

«ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի 15-Ն որոշումները և «ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 10-ի N 12446).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջը 2026 թվականի (ընթացիկ տարվա) համար տալ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Արմավիր մայրուղի 48/1 հասցեում ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն (Թույլտվություն N 192 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1227Ա

13 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

«ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 15-Ն որոշումները և «ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 10-ի N 12453).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջը 2026 թվականի (ընթացիկ տարվա) համար տալ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Արմավիր մայրուղի 48/1 հասցեում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն (Թույլտվություն N 194 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1228Ա

13 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

«ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի 15-Ն որոշումները և «ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 10-ի N 12454).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջը 2026 թվականի (ընթացիկ տարվա) համար տալ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Արմավիր մայրուղի 48/1 հասցեում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 195 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող՝
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1229Ա

13 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հաշվի առնելով կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանի զեկուցագիրը, երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ «Լավ էլի» հայկական ալտերնատիվ ռոք խմբի համերգի կազմակերպման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 900000/ ինը հարյուր հազար/ դրամ փոխանցել ԱՁ Տիգրան Ոսկանյանի Ամերիաբանկ ՓԲԸ-ի 1570092769060100 հաշվեհամարին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1230-Ա

14 օգոստոսի 2026թ. **ք.Էջմիածին**

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16.06.2026թ.-ի թիվ 19-ԵԳ/1181-26 դիմումի հիման վրա 16.06.2026թ.-ին հարուցված վարչական գործը՝ Ալիսա Պետրոսի Ծատուրյանի կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նալբանդյան փողոցի թիվ 11գ /ներկայիս՝ 11/1/ հասցեում X զորամասի տարածքում, այդ նպատակի համար չհատկացված՝ հատուկ նշանակության հողամասում առանց համապատասխան թույլտվության կառուցված ինքնակամ շինությունը քանդելու մասին, պարզեց.

ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16.06.2026թ.-ի թիվ 19-ԵԳ/1181-26 դիմումի հիման վրա 2026 թվականի հունիսի 16-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախկինում նշված հարցի վերաբերյալ Ալիսա Ծատուրյանի լիազոր ներկայացուցիչ Հովհաննես Սեթաղյանի կողմից դիմում էր ներկայացվել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նալբանդյան փողոցի թիվ 11գ /ներկայիս՝ 11/1/ հասցեում X զորամասի տարածքում կառուցված ինքնակամ շինությունը քանդելու և/կամ ինքնակամ կառուցված շինությունը զորամասի օգտագործմանը հանձնելու պատրաստակամության մասին, Ալիսա Ծատուրյանի լիազոր ներկայացուցիչ Հովհաննես Սեթաղյանը բանավոր տեղեկացվել էր, որ ՀՀ ՊՆ քննարկելով առաջարկը, նպատակահարմար չի գտել շինությունը զորամասի կարիքների համար օգտագործելու համար և, որ այն անհրաժեշտ է ապամոնտաժել:

30.06.2026 թվականին Վաղարշապատի համայնքապետարան է ստացվել Ալիսա Ծատուրյանի և Հովհաննես Սեթաղյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Աշոտ Նուրիջանյանի դիմումը, որտեղ նշվել է, որ ենթադրաբար ինքնակամ կառուցված շինությունը որոշակիացված չէ, պարզ չէ դրա տեղադիրքը և մակերեսը, քանի որ այն գտնվում է Ալիսա Ծատուրյանին սեփականության իրավունքով պատկանող շինությանը կից, ուստի անհրաժեշտ է կատարել համապատասխան ուսումնասիրություններ: Ներկայացուցիչը պնդում է, որ տվյալ վեճը կարող է լուծվել միայն դատական կարգով և, որ համայնքը իրավասու չէ քանդելու տվյալ շինությունը:

Միաժամանակ խնդրել է վարչական վարույթ հարուցելու պարագայում լսում հրավիրել և ծանուցել մասնակիցներին:

2026 թվականի հուլիսի 13-ին հրավիրվել են լսում Ալիսա Պետրոսի Ծատուրյանի կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նալբանդյան փողոցի թիվ 11գ /ներկայիս՝ 11/1/ հասցեում X զորամասի տարածքում, այդ նպատակի համար չհատկացված՝ հատուկ նշանակության հողամասում առանց համապատասխան թույլտվության կառուցված ինքնակամ շինությունը քանդելու մասին վարչական գործով:

Հրավիրված լսմանը ներկայացել էին Հովհաննես Սեթաղյանը և Աշոտ Նուրիջանյանը: Հրավիրված լսմանը Ալիսա Ծատուրյանի ներկայացուցիչը պնդեց դիմումով ներկայացվածը:

Հաշվի առնելով Աշոտ Նուրիջանյանի կողմից ներկայացված առարկությունները և ելնելով ՀՀ կադաստրի կոմիտե հարցումներ կատարելու և համապատասխան կոորդինատներ ստանալու անհրաժեշտությունից, Վաղարշապատ համայնքի ղեկավարի 15.07.2026 թվականի թիվ 1040-Ա որոշմամբ 16.06.2026 թվականին հարուցված վարչական վարույթը կասեցվել էր մինչև 30 օր ժամկետով՝ 14.08.2026 թվականը ներառյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչ կասեցման ավարտը ՀՀ կադաստրի կոմիտեից պահանջված տվյալները չեն ստացվել և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ստացված կոորդինատներով է հնարավոր որոշել ինքնակամ կառույցի սահմանները, Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը առաջարկել է 16.06.2026 թվականին հարուցված վարչական վարույթը կրկին կասեցնել՝ մինչև 30 օր ժամկետով:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝

«Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Նույն օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

2. Վարչական վարույթի ժամկետն սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից:

3. Սույն օրենքով նախատեսված ժամկետները հաշվարկվում են օրացուցային օրերով:

Եթե ժամկետը լրանում է ոչ աշխատանքային օրը, ապա ժամկետն ավարտված է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 18-00-ին»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի երկրորդ պարբերության համաձայն՝

«...վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«... Սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները

վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը»:

Իսկ նույն հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝

«...Վարչական վարույթի կասեցման մասին որոշումը կարող է ընդունվել վարույթի ցանկացած փուլում»:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վարչական մարմինը պարտավոր է ապահովել վարչական վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 46-րդ, 49-րդ, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կասեցնել 16.06.2026 թվականին հարուցված Ալիսա Պետրոսի Ծատուրյանի կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նալբանդյան փողոցի թիվ 11գ /ներկայիս՝ 11/1/ հասցեում X զորամասի տարածքում, այդ նպատակի համար չհատկացված՝ հատուկ նշանակության հողամասում առանց համապատասխան թույլտվության կառուցված ինքնակամ շինությունը քանդելու մասին վարչական գործի վարույթը՝ սույն որոշումն ընդունելու օրվանից 30 օր ժամկետով:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
14 օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին